

466

Հոկտեմբերյան Համբակի առթիվ

ՄՈՒՍԱՔԱՆ ԿՈՒՂԻՑԵՎ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
ԹՇԱՄԻՆԵՐԸ<sup>1</sup>  
ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԱԴՐՊԵՏԱՐԱՏ.

Բազու — 1927

9(47.924)

4-91

19 AUG 2011 1998 N 162  
24 JAN 2006

Ա  
Հաշված  
9(47.924)

4-91

9 (47924) 329  
փ —

Պրոլետարիատ բուլոր յերկրների, միացեք:

Մահսանական կուլյաթել

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
ԹՇԱՄԻՆԵՐԸ  
ԱԴՐԵՖԱՂԱՆՈՒՄ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДАНИЯ  
Академии Наук  
СССР



ԱԴՐԵՖԱՂԱՆՈՒՄ  
Բազու — 1927

29 MAY 2013

4668

59152-66  
9(47-924) Հայրենիք  
Կ-91 Հոգութեան բանահանութեան մասնակից Առաքել Աղասի Խոջուն  
ՀԱ-5177 | 29.08.81



59152-66

Գլավին. 4103.

Պատկեր 1037.

Տեղագայթ 2000.

Հ Ե Պ Ի Ն Ա Կ Ի Ց

Ժամանակի սահմանափակ լինելը յեվ բանվոր ու գյուղացի բանկագին ընթեցողների ու շագարկողների համար համարվության չեն տվել ինձ մանրամասն կանգ առնելու Ադրբեյջանի աշխատավորների պայքարի մեջ յեղած փոփոխությունների վրա՝ իրենց գասակարգային թեմաթիկների դեմ: Յես փորձել եմ համարվության չափ համառուս բնուրագրել Հոկտեմբերի քենամիներին՝ նրանց բազական ծրագրների, գործունելության յեվ յելույթների նիման վրա:

Ոգտվել եմ նետելյալ նյուրերից.—«Խոսկինադ» յեվ «Ազերբայջան» թերթի 1919—20 թվերի համարները ու Հեղափոխության Թանկարանում յեղած նախկին մուսավարական մինիստրների գործերը: Քաղվածքներն արված են այդ գործերից:

1917 թվի փետրվար ամսին հեղափոխական շարժման ճնշման տակ ընկավ ռուսական կայսրության փթած շնչքը: Ցարական ինքնակալության վրա հաղթանակ տարան պրոլետարիատն ու գյուղացիության առաջավոր խավերը՝ բուրժուազիայի մասնակցությամբ, վորը համոզվել եր ցարական իշխանության անդործունեյության և բթության մեջ: Ոգովելով այդ հաղթանակից՝ բւրժուազիան հեռացնում ե ցարին և Ռուսաստանի կառավարության գլուխ կանգնում: Սակայն ռուսական անընդունակ ու անվճռական բուրժուազիան յերկար՝ չկարողացավ մնալ կառավարության գլուխ: Նա չկարողացավ վոչ հաց տալ քաղցած ազգաբնակությանը և վոչ ել վերջ տալ մաշող յերկարատև պատերազմին: Սակայն ռուսական հեղափոխությունը տվել ե այն, ինչով նա խիստ տարբերվում ե Արևմտյան Յեվրոպայի հեղափոխություններից: Նա հեղափոխական այնպիսի մասսաներ ե տվել, վորոնք պատրաստ են յեղել ինքնուրուցյն կերպով դուրս գալու: Նա ստեղծել ե բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդներ—այնպիսի որգաններ, վորոնք անհամեմատ ավելի գեմոկրատական են, քան բոլոր նախկին որգանները. այնպիսի որգաններ, վորոնք հնարավորություն են տալիս դաստիարակել ու լուսավորել բանվորական, զինվորական և գյուղացիական իրավագործի մասսաներին ու տանել նրանց իրենց հետեւց»: (Լենին հատող ՀՀ, մաս II):

Յեվ ահա այս հեղափոխական մասսաները Հոկտեմբերին վճռական հարված են տալիս բուրժուազիային, ցրում նրա կառավարությունը և միանգամ ընդմիջութերը տալիս հին կարգերին: Այդ պայքարում հաղթություն տարած պրոլետարիատը վորոշ նպատա-

կի և ձգուել—վոչնչացնել ճնշումը, անհավասարությունը, վոչնչացնել պետությունը, վորպես «կազմակերպված բռնություն» և կապիտալիստական հասարակարգը դարձնել սոցիալիստական։ Ապագայում ամեն մի պետականության վոչնչացումը նախապատրաստելու և բուրժուազիայի ամեն մի ընդդիմագրությունը բռնի կերպով ճնշելու համար՝ պրոլետարիատը հայտարարում ե յուր դասակարգի դիկտատուրան և խորհրդային հանրապետությունն կազմակերպում։

Խորհրդային իշխանությունը վորպես մասսայական կազմակերպություն այն դասակարգերի, վորոնք հալածվել են կապիտալիստների կողմից, վորոնք բուրժուական-դեմոկրատական յերկրներում որենքով իրավահակասար են յեղել, բայց իսկապես հեռացված են յեղել քաղաքական կյանքից,—ահա այդ մասսաներին խորհրդային իշխանությունը քաշել ե դեպի պետական ժինարարությունը և հալածված ազգաբնակության ամենահետամնաց խավերին մասնակից արել այդ շինարարությանը։

Խորհրդային իշխանությունը հողը տվել ե գյուղացիներին, բուրժուազիայից ֆարբիկներն ու գործարանները խիելով՝ եքսպրոլիտացիայի ե յենթարկել նըրան, կազմակերպել ե յուր Կարմիր Բանակը՝ հեղափոխության շահները պաշտպանելու համար և հաստատքայլերով սկսել հասարակական կյանքի նոր շենք կառուցել։

Հոկտեմբերի հեղափոխական հրդեհի արշալույսը լուսավորել ե նախկին ռուսական կայսրության բոլոր հեռավոր խոռվան անկյունները և նոր կյանքի կոչել աղքարքնակության ճնշված մասսաներին։ Ամենուրեք գյուղացին սկսում ե զգալ վոր խորհրդային իշխանությունը չքավորների իշխանությունն ե, վոր միայն այդ իշխանությունը կարող ե նրան ազատել կալվածատերերի լծից և վոր միայն նա կարող ե տանել իրեն դեպի լուսավոր կյանք։ Ֆարբիկ-գործարանային

քաղաքների ապստամբած բանվորների վորոտալից հարվածների արձագանքը լավում ե բոլոր խոռվագությունները։

Դրա հետ միաժամանակ Հոկտեմբերի ամենուրեք վորողած ալիքները սարսափեցնում են ծայրյերկրների ազգությունների բուրժուազիային և ստիպում նրան շտապ կերպով կազմակերպելու յուր ուժերը, պատրաստվել հեղափոխական ալիքների տարածման առաջնաներու և նրան հականեղափոխական հարված տալու։ Հոկտեմբերի հեղափոխական հովերը Բազվի պրոլետարիատի միջոցով հասնում են և թուրք գյուղացուն։

Աղրբեջանի կապիտալիստները, խաները, բեկերը և նր սոց համախոն ես-երները, մենշևիկներն ու դաշնակները վոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, ամեն կերպ աշխատում են իրենցից հեռու պահել Հոկտեմբերի ալիքները։ Դրա համար նրանք ոգնության են դիմում իմպերիալիստական Անվլիային, սուլթանի զորքերին, ուժեղացնում են շովինիզմը և ազգամիջյան թշնամությունը, սրի ու հրի մատնում Աղրբեջանի գյուղերը, և այն, և այն։

Աղրբեջանի կապիտալիստների, կալվածատերերի, մուսավաթիստների, քաշնակների և ես-երների կողմից Բազվի պրոլետարիատի ու թուրք գյուղացիության դեմ մղած պայքարի ամբողջ պատմությունը լի ե ստորությամբ, կեղծիքով, դավաճանությամբ և այդ լերպյալ ռեալիզմիների ու հականեղափոխականների ստերով։ Բավական ե բերել մի քանի փաստեր ու դոկումենտներ, վորոնք նկարագրում են մոտ անցյալի պատկերը—խանական բռնակալության, ինքնիշխանության և հալածանքի անիծյալ որերի սարսափները։

### Դեպի Բազվում

Համառոտ կերպով թվենք այն դեպքերը, վոր տեղի են ունեցել Աղրբեջանում մուսավաթական կառա-

վարության կաղմվելուց առաջ: Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Բագվի պրոլետարիատը կազմակերպելով յուր մարտական որդանը՝ Բանվորական Պատգամավորների Խորհուրդը, կատաղի դասակարգային պայքար և սկսում յուր թշնամիների՝ նախարարությունաբերողների խորհրդի դեմ: Բանվորական խորհրդում ղեկավարությունը բոլշևիկյան ֆրակցիայի ձեռքում եր գոյնվում, չնայած վոր նա թվով շատ քիչ եր: Մասսաների ճնշման տակ համաձայնողական կուսակցությունները ստիպված եին գնալու բոլշևիկյան ֆրակցիայի հետեւից և յենթարկվելու նրա տակտիկական գծին: Նոյեմբեր ամսին հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն ցրվում ե և իշխանությունն անցնում է խորհուրդներին: Սակայն դրանից անմիջապես հետո սկսվում է թուրք և հայ բուրժուազիայի պրովոկացիոն գործունեյությունը: Հայ բուրժուազիան ոգտվելով այն հանգամանքից, վոր Բագվում կենտրոնացել եին հայկական զինվորական մասեր, դաշնակների ղեկավարությամբ կազմակերպում ե ազգային զորամասեր: Աղրբեշանի բեկերն ու խանութանական նույնպես շուտով ստեղծում են իրենց ազգային զորամասերը և նրանց զինում ֆրոնտից վերադարձող զորքերից խլած գենքերով: Բուրժուազիան այդ յերկու ուժերի ընդհարում ե առաջացնում և ըսկում ազգային կոտորած: Բանվորական խորհրդի և նրա ղեկավար բոլշևիկյան կուսակցության ջանքերի շնորհիվ ազգային պայքարը ույյունները չի անցնում և կարճ ժամանակում լիկվիդացիայի ե յենթարկվում: Ապագայում ազգային պայքարի առաջն առնելու և պրոլետարիատի ուժերը բուրժուազիայի դեմ դասակարգային պայքարի հանելու համար խորհուրդները իրենց կազմից ժողկոմխորհ են կազմում (Սովորակոմ) և փաստապես ամրապնդում իշխանությունը խորհուրդներին անցնելու: Սակայն բանվորների և պյուղացիների թշնամիները քնած չեին: Անգլիական իմպե-

րիալիստները ձգտում եին գրավելու Բագվի նավթային հարուստ ույսոնը և դրա համար ոգտագործում եին ես-երների, մենշևիկների և դաշնակների ցույց տված ծառայությունը: Աղրբեշանի բեկերը ողնության են կանչում տաճկական գեներալներին. դաշնակները, ես-երներն ու մենշևիկները ոգտվելով պարենավորման դժվարություններից, արշավանք են սկսում բոլշևիկների դեմ: ազիտացիա են անում անգլիացներին հրավիրելու համար, և խորհրդում ձայների ճնշին մեծամասնությամբ նրանց հաջողվում ե համապատասխան բանաձև հանել: Ահա թե ինչ ե ասել այս մասին ընկ. Լենինը 1918 թվի հունիսի 29-ին Խորհրդային Ռուսաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նիստում.—«Յերեկ տեղեկություն ե ստացվել, վոր Բագվում անզգության կազմական իմպերիալիստները հաջողություն են ունեցել: Նրանց հաջողվել ե Բագվի խորհրդում 30 ձայնով մեծամասնություն ստանալ բոլշևիկների և այն ձախ ես-երների դեմ, վորոնց թիվը դժբախտարար շատ քիչ ե և վորոնք չեն հետեւել Սուկվայի ձախ ես-երների զզվելի ավանդյուրային ու դավաճանությանը, այլ հավատարիմ են մնացել խորհրդային իշխանությանը՝ իմպերիալիզմի և պատերազմի դեմ»: (Լենին հատոր XV, յերես 392):

Ահա այսպես են դավաճանել ես-երները, մենշևիկներն ու դաշնակները Բագվի պրոլետարիատին և աջակցել, ինչպես ասել ե Լենինը՝ «իմպերիալիստների հաջողություններին Բագվում»:

Տաճկական գեներալներն ել ոգտվելով բեկերի հրավիրից, իրենց զորամասերն ուղարկում են դեպի Բագվու և մտադրվում են Աղրբեշանն իրենց կալվածքը դարձնելու:

Վրացական դավաճան մենշևիկները տաճկական զորամասերը բաց են թողնում իրենց յերկրով: Այդպիսով, ուրեմն, Բագվի կոմունան ընկնում ե թշնամական ուժերի խաչաձև կրակի տակ և անգլիական իմ-

պերիալիստների, տաճկական գիներալների, դաշնակների, ես-երների, մենչկիկների ու բեկերի հարվածներից հուփիսի վերջին ընկնում եւ:

Բայց դրանից հետո ես-երներն ավելի մեծ ստորոտիյուն են գործում. Անդրկասայան յերկրում անգլիացիների աջակցությամբ գնդակահարուս են Բագվի 26 կոմիսարներին, դրանց մեջ նաև բանվոր դասակարգի այնպիսի առաջնորդների, ինչպիսիք են ընկընկ. Շահուույանը, Ալյոշա Զափարիձեն, Ազիզբեկովը և ուրիշները:

Ահա թե ինչպես են դավաճանել մենշևիկները, ես-երներն ու դաշնակները աշխատավորներին և նրանց առաջնորդներին ու կատարելով՝ իմպերիալիստների ցուցմունքները, դառել նրանց ագենտներն ու լակեյները:

Այս անգամ մենք կցանկանայինք բացառապես լուսաբանել այս փաստերն ու դոկումենտները, վոր վերաբերում են Աղբբեջանում մուսավաթիստների ու իտարիադիստների գործունելությանը. բուրժուազիայի և կալվածատերերի այդ ներկայացուցիչների գործունելությանը, վորոնք Բագվի Կոմունան ջախջախելուց հետո փորձում եին կառավարել Աղբբեջանը:

Բեկերն ու կալվածատերերը ստեղծում են հանրապետություն՝ իրենց ունեցվածքը պահպանելու համար

«Ազգերի ինքնորոշում», «Աղբբեջանի ազատություն» և «ինքնուրույնություն» խոսքերի տակ ծածկվելով, բուրժուազիան և բուրժուական ինտելիգենցիան աշխատում են Աղբբեջանի և Հոկտեմբերյան հեղափոխության մեջ չինական պարիսպ ստեղծել. «Ազատություն», «գեղմոկրատիա» և «ինքնուրույնություն» — դրանք այն շղարշն են, վորի հետև նրանք հաճախ շատ անհաջող կերպով եին ծածկում իրենց միակ ձբդ-

տումը—այն ե՝ պահպանել իրենց իրավունքները, ունեցվածքը և կապիտալիստները:

Ահա թե ինչ ե ասել այդ մասին վ. ի. Լենինը.— «Լիբերալ բուրժուազիան ընդհանրապես և լիբերալ բուրժուական ինտելիգենցիան մասնավորապես՝ չեն կարող ազատության և որինականության չձգտել, վորովինետեւ առանց այդ բանի բուրժուազիայի տիրապետությունը լիովին ու ապահովված չե. Սակայն բուրժուազիան մասսաների շարժումից ավելի ե վախենում, քան ունակցիայից. Դրա համար ել լիբերալիզմը չափազանց թույլ ե քաղաքականության մեջ դրա համար ել լիբերալներն իրենց քաղաքականության մեջ առաջ են բերում անվիրջ յերկիմություն, սուս, կեղծիք, վախկոտ արարքներ. Նրանք սկսում են խոսել գեմոկրատիզմի մասին, վորպեսզի մասսաներին իրենց կողմը գրավին, և միևնույն ժամանակ նրանք խորապես թշնամի են լինում հենց այդ մասսաների շարժմանը, վախենում են նրանց նախաձեռնությունից. Նրանք ձեւը են գործ գնում «յերկինքը գրոհով վերցնելու»— ինչպես արտահայտվել ե Մարքսը անցյալ դարու Յելլրոպայի բանվորական շարժումներից մեկի նկատմամբ»: (Լինին, հատոր XX, մաս I, յերես 358):

Իտաֆիհադիստների կուսակցությունը, վոր ավելի ուսակցիոն ու լիբր ե, և միաժամանակ ավելի աշկարա, ուղղակի հայտարարում եր. «Կովկասյան ժողովուրդների առանձնացման միակ դրդապատճառը, մեր խորին համոզմունքով, յեղել ե ինքնապահպանության զգացմունքը և ուշիւ վոչինչ, (այսինքն՝ խաների ու բեկերի կյանքի և ունեցվածքի պաշտպանությունը. Մ. Կ.) («Իտաֆիհադ» թերթ, 1919 թ. № 2):

Իսկ մեր մնացին Աղբբեջանի «ինքնուրույնության» մասին այն գեղեցիկ խոսքերը. մեր մնացին ազգային «գաղափարները»! Ցեվ ինչքան ստոր են հնչում մուսավաթիստների ու իտաֆիհադիստների բերնում «ազատություն» և «գեմոկրատիա» խոսքերը, վոր բացա-

առաջես խաների և բեկերի շահերին են ծառայում։ Միայն ամենավերջին ապուշները կարող են հավատալ այդ կեղծավորներին ունրանց խոսքերին և ֆրազներին։ «Իտտիհադիստները» այդ մասին հայտարարել են 1919 թվի մարտ ամսին, յերբ Ռուսաստանի ռեակցիան գեր համոզված եր, վոր հաղթելու ե. իսկ մուսավաթիստներն ու իտտիհադիստները միշտ պատրաստ եին համաձայնության գալու նրանց հետ։

### Պառլամենտի կազմը

1918 թվի նոյեմբեր ամսին ազգային ժողովը վորոշում ե ստեղծել պառլամենտ, իսկ նույն թվի գեղտեմբեր ամսին պառլամենտը արդեն ստեղծվում և սկսում ե աշխատել։

Այդ «բարձրագույն» և «դեմոկրատական» հիմնարկության ընտրությունները կայացել են պրիստավների և գավառապետների անմիջական ղեկավարությամբ, վորոնք մտրակի և մահակի միջոցով լիովին ապահովել են այդ ընտրությունների անհրաժեշտ «ազատությունը»։ Այդ ժամանակվա բոլոր դեմոկրատական ու լիբերալ թերթերը լի են փաստերով ու դոկումենտներով այն խայտառակությունների ու բռնությունների մասին, վոր տեղի եին ունենում ընտրությունների ժամանակ ազգաբնակության վրա։ Բերենք թեկուզ հենց մի փաստ, վոր հրատարակված ե յեղել ամենառեալիցին «Իտտիհադ» թերթում։ «Գյոգչայից գրում են, վոր այնտեղ կայացել ե պառլամենտի անդամի ընտրություն և ընարությունների ժամանակ տեղական ազմինիստրացիան ճնշում ե զործադրել։ Ընտրությունների ժամանակ նախագահել ե հաշտարար դատավոր մի բեկ, վորն և ընտրվել ե պառլամենտի անդամ։» («Իտտիհադ» № 4, յերես 4)։ Այդպիսի փաստեր համարյա թե նույնքան են, վորքան և պառլամենտի անդամներ։

Նման «դեմոկրատական» ընտրությունների հետևանքով պառլամենտն ունեցել ե հետեւյալ կազմը։ մուսավաթիստներ—38 հոգի, իտտիհադիստներ—13, երարիստներ—7, սոցիալիստներ—12 (մեկը կոմունիստ, իսկ մյուսները համաձայնողականներ), անկուսակցականներ—6, «Ճախ անկուսակցական»—1 (բանից դուրս ե գալիս, վոր այդպիսիներն ել կան), «սլավանո-ոռուսական հասարակության» ֆրակցիայի անդամներ—4 հոգի, ազգային փոքրամասնություններից ֆրակցիայի անդամներ—4, «հայկական ֆրակցիայի» անդամներ—4, և 7 դաշնակ։

Ահա այն պառլամենտը, վորն Ադրբեջանին «ազատություն և ինքնուրույնություն» պիտի տար։ Բայց դա գեր բոլորը չեւ Պառլամենտի հետեւ կանգնած իրենց կամքն են թելագրում դժբախտ ու հալածված Ադրբեջանի բախտը վորոշող Փինանսական տուղերն ու ֆեոդալները։ Այդ գաղտնիքը գժվար մոմենտին բաց ե անում պորտֆեներն անարդար կերպով բաժանելուց վիրավորված «Իտտիհադը»։ Ահա թե ինչ ե գրված յեղել այդ թերթի № 17-ում, «Մուսավաթ կուսակցությունը վճռել ե վերջնականապես «դեմոկրատանանալ» և յուր բոլոր կապերը կտրել բուրժուաների, կապիտալիստների, ունեսուների, խաների ու բեկերի հետ։ այդ ցույց տալու համար նա միացել է Ասադուլլակի (հայտնի միլլիոններ), Ահմեդով յեղբայրների (խոշոր առևտրականներ ու արդյունաբերողներ), Խան-խոյյակու (Փեռլալ), Աղա Աշուրովի (զոչի) հետ, և այլն և այլն։

Ահա Ադրբեջանի «իսկական» «հոգատարների» պաշտպաններից անունները Մուսավաթիստները պառլամենտի անդամների մեծամասնություն կազմելով, անբաժան կառավարում եին Ադրբեջանը։ Նրանք յերեմն բլոկ եին կազմում «սոցիալիստ»—համաձայնողականների, յերբեմն ել իտտիհադիստների հետ։ Ավելորդ չեր լինի ավելի մոտ ծանոթանալ այդ կուսակցության

նպատակներին, անելիքներին, նրա ծրագրին ու գործունեյությանը:

## Մուսավարք

1917 թվին Մուսավաթի առաջին կուսակցական համագումարում ընդունվում է կուսակցության ծրագիրը: 1919 թվին հերթական համագումարում ծրագրի մեջ մի քանի փոփոխություններ են մտցրվում, վոր կապված են Աղբաբեջանը ինքնուրույն հայտարարելու հետ: Իսկ ինչ ծրագիրը ունի կուսակցությունը: Հականեղափական լիբերալ բուրժուազիան միշտ կարողացել է գեղեցիկ ժեստեր անել, «ազատության» մասին քաղցր ճառեր ասել, իր կուրծքը ծեծել, և յերդվել հայրենիքի «հավատարիմ» լինելու մեջ և այլն: Նա յուր ծրագիրն ել հարստացրել է գեղեցիկ ֆրազներով, բարձրահնչուն լոգունգներով, մաքսիմալ պահանջներով: Ահա թե ինչ ե ասել Լենինը այդ մասին: — «Կուշտ բուրժուան միշտ խրախուսում ե այն բուրժուային, վորը «բավական դեմոկրատական» ծրագիր ե առաջ քաշում՝ մասսաների աշքերին թող փչելու համար, վորպեսզի զինարարի հեղափոխական ինքնանձներին և ինքը լիդալ հանապարհի վրա կանգնի «(Լենին, XX հատոր, I մաս, յերես 227):

Աղբաբեջանի կապիտալիստներն ու ֆեոդալները ավելի առատածեն դուրս յեկան: Նրանք վոչինչ «չըխնայեցին» հայրենիքի համար: Ահա նրանց ծրագրի մի քանի ավելի դեմոկրատական կետերը. 1) խոսքի, խողի, մամուլի, միությունների, ժողովների ազատություն, 2) ընդհանուր, հավասար գաղտնի, ուղղակի և համեմատական քվարկություն, 3) 20 տարեկանի հասած քաղաքացիների իրավունք՝ մասնակցելու ընտրություններին, առանց սեփի, ազգության և կրոնի խրորակության, 4) քաղաքացիների իրավունք՝ իրենց համոզմունքներն ու տեսակետները տարածելու համար,

5) դոնփակ ժողովներ հրավիրելու իրավունք, 6) անձի անձեռնմխելիություն... և ընդհանրապես բոլոր «իրավունքները»... շատ լավ կլիներ, յեթե աղմինիստրացիայի «գործունյա մասնակցությամբ» «կրականանային» այդ «իրավունքները». այն ժամանակ ազգաբնակչության համար առանձին դժվարություններ չեն լինի: Բայց հենց վոր բանը հասնում է ունեցվածքային իրավունքներին, Աղբաբեջանի կալվածատերերի շահերին, այն ժամանակ «Մուսավաթը» չցանկանալով վիրավորել ֆեոդալներին, «արդարացի» կերպով վորոշում եր՝ «զյուղացիներին բաժանած հողերի նախկին տերերի մասները ծածկելու համար վարձատրություն և տըրվում հատուկ փոնդից, վոր կազմվում ե ունեոր դասակարգի պրոգրեսսիվ տուրքից»: Հենց դրա համար ել գոյություն ունի պետական գանձարանը, վոր ժողովրդին թալանի և կալվածատերերին պարզեներ տա, նպաստելով նրանց փարթամությանն ու դատարկապրատությանը:

Իե ինչ արած, հենց «Մուսավաթն» ել մի հականեղափական կուսակցություն ե, վորպեսզի պաշտպանի կալվածատերերի շահերը... բայց բանը մենակ դրանում չե... իզուր չե լենինը ասել, թե «մի յերգիր նրանով, վոր դու թղթի վրա գրել ես սահմանադրության, ընդհանուր ընտրական իրավունքի, կոալիցիայի ազատության, ազգերի իրավահավասարության մասին և այլն. այդ խոսքերը գրոշ սնդգամ չարժեն, ցույց տուր ինձ քո գործերը»: (Լենին, հատոր ХХ, մաս I, յերես 373):

Ահա հենց այդ գործերն են մերկացնում Մուսավաթի «գեմոկրատական ծրագրի» ամբողջ կեղծությունը, վորպես ուսակցիոն ֆեոդոլական—բուրժուական կուսակցության, վորը գործնականում միջնադարյան կարգեր ու բարքեր ե պաշտպանում և բռնության ու հալածանքի ամենադաժան ուժիմ հաստատում:

## Մուսավարականի իշխանության առաջինդեկտեր

Իշխանության գլուխ անցնելով, Ազգբեջանի փեռ-  
դաներն անմիջապես իրանց վրայից վերցնում են գե-  
ղովաստական դիմակները։ Առաջին հերթին ահա թե  
ինչ են սկսում անել մուսավաթիստները։ — խոշոր հար-  
ված հասցնել զյուղացիներին՝ միանգամ ընդմիշտ խաչ  
դնելով հողային հարցի վրա, հեղափոխական շարժման  
պատճառով բեկերին հասած վնասները հետ տալ։ Դեռ  
մինհստրական բազկաթոռների վրա ինչպես հարկավորն  
և չնատած (Ազգբեջանի ինքնուրույնությունը հայտա-  
րարվել է 1918 թվի մայիսի 28-ին), դեռ հեղափոխա-  
կան վրոտի արձագանքները չդադարած, գուրս և գա-  
լիս մուսավաթական կառավարության անել հրամանը,  
վորը զրոյի և հավասարեցնում զյուղացիության ձեռք  
բերած ամենաչնչին նվաճումները։ Ահա թե ինչ են ա-  
սում կառավարության վրոշումները (1918 թվի հու-  
նիսի 22-ին).—1) Անդրկովկասի սեյմի կողմից ընդու-  
նած հողային ռեֆորմի որենքի լրագործումը դադա-  
րեցնել մինչև հիմնադիր ժողով հրավիրելը. 2) մինչ  
այժմ թե պետական և թե մասնատիրական խլած հո-  
գերը վերազարծնել. 3) մոտ ապագայում զեկուցում  
ներկայացնել հողային կոմիտեները վերակազմելու  
կամ վերացնելու մասին. 4) զեկուցում ներկայացնել  
հետ գնման վճարների մասին։ Ահա թե ինչպես և հո-  
գացել բուրժուական՝ կալվածատիրական իշխանու-  
թյունը «գեմոկրատիայի, ազատության և հավասարու-  
թյան» մասին, ահա թե ինչպես և նույն վերջ դրել հե-  
ղափոխության ամենաչնչին նշաններին և հաստատուն  
կերպով հայտարարել իր ժառանգական, կալվածատի-  
րական իրավունքների մասին։

### Ազգարային շարժումը

Ի պատճին վերաբերի այդ խիստ հարվա-  
ծին, ամբողջ Ազգբեջանում ազգարային շարժման լայն

ալիք և անցնում։ Դյանջայի նահանգապետը 1918 թվի  
նոյեմբեր ամսին գրում է նորին գերազանցություն  
մինհստրական, թե «ազգարային շարժման հողի վրա ա-  
ռաջացող հուզումների առաջն առնելու համար իմ կար-  
ծիքով խիստ անհրաժեշտ և հենց այժմ իսկ ջեկամ և  
թառլ կայարաններում ունենալ անհրաժեշտ քանա-  
կությամբ զինվորական ուժերը»։

Զաքարթալյայի նահանգապետը ևս ինքում է իր  
մոտ ուղարկել առնվազը մի բատալյոն կտրգապահ  
ազգբեջանյան կամ առաջական զորք, անհրաժեշտ մի-  
ջոցներ ձեռք առնելու համար, — ահա թե ինչ և ասվում  
նրա զարտնի տեղեկագրի մեջ։

Իսկ Ղազախից գրում են. «Գավառի գյուղական  
ազգարանկության տրամադրությունը անհանգիստ և  
և իշխանությանը չենթարկվելու հակումներ են յերե-  
գում («Արիմիլ № 130, զալտնի գրագրություն»)։

Դյանջայի գավառապետը յեռանգուն կերպով  
պայքարում է բեկերին հասած վնասները հետ տալու  
մասին կառավարության հրամանը կատարելու համար,  
և հենց այդ նպատակի համար ել նա բեկերի համա-  
գումար և հրավիրում։ Սակայն նրան չի հաջողվում  
այդ անել, վորովհետեւ «նա չի կարողանում յերաշխա-  
վորել համագումարի անդամների ապահովությունը»։

Նման տեղեկություններ գալիս են համարյա բո-  
լոր զավառներից։

Իշխանության նեղինակավորությունը յեկ  
կարգը գավառներում

Ազգբեջանի չունեոր գյուղացիությունը, վորն  
արգեն լսել եր Ազգբեջանի և Ռուսաստանի քաղաքնե-  
րից հեղափոխական շարժման մասին՝ բուրժուական-  
կալվածատիրական իշխանությունը կազմակերպելու  
հենց առաջին իսկ որվանից բացասական վերաբեր-  
մունք և ցույց տալիս նրան գանձոր զյուղացիությու-



Նը հանձինս այդ այսպես կոչված շկուրնիկների և ղոչխների ազգային կառավարությամն՝ տեսնում է յուր դասակարգային անհաշտ թշնամիկներին։ Մասսաները բնագրուեն զգում եին նրանց «գեմոկրատական» լու զունգների ստությունը, իշխանության անդորրությունը, նրա ազահությունը և ծախվածությունը։ Այդ բանին նպաստում եր մանավանդ նրա չինովիկական ամրով ապագարատը։ Դյուզացիները հրաժարվում են ասկերներ տալուց, հարկեր վճարելուց և իշխանության ներկայացուցիչներին լսելուց։ Քերենք, որինակ, մի քանի փաստեր։ Դյանջայի տեղական իշխանությունը հրաժարվում և ասկերներ տալուց, թագյնում և դեղերաթիրներին, և այդ հողի վրա արգեն սպանություններ են տեղի ունենում։ և այն։ Ղուրայի նահանգապետը գանգատում է, թե «Ռուսակի շրջանի զյուզացիները միանգամայն հրաժարվում են հարկեր և նորակոչներ տալուց, և վոր գրա մեջ մեղավոր և պառամենափառ անդամ մի ինչ վոր եֆենդի, վորը խոսուացել և վորոշ վարձարությամբ զյուզացիներին ազատել հարկերից ու պարտականություններից։

Նուխու գավառում ամբողջ ժամանակ գործում է ինչ վոր խոշոր շայկա, իսկ գյուղերում իրար հետեւից ապստամբություններ են լինում և սպանում են քաղաքը վերցնել ու վրեժ լուծել տեղական իշխանությունից։ Լենքորանի գավառի մի քանի շրջաններ մինչև «մուսավաթի» վերջին որերը չեն յենթարկվել խան-քերկական իշխանությանը իսկ Զաքաթալայի շրջանը ամբողջովին բանված ել «ավագակներով»։ «Զաքաթալայի շրջանի ազգաբնակությունը, — զբում ե պարոն նահանգապետը, — միշտ ել (?) աշքի և ընկել ընդհանրապես անպարտածանաշչությամբ։ Թալաններ, կողոպուտներ, իշխանությանը չմերու դեղեր և դիմադրություններ, կարգը խանգարելու հաճախակի դեղեր, — այս բոլորը այս գավառի հատկանիշ կողմերն են կազմում։ Ահա

թե ինչպիսի «ավագակներ» ու «մարդասպաններ» են երկայացնում Զաքաթալայի գյուղացիներին «նորին գերեզանցությունը»։

Այս բոլորից հետո ել Աղբբեջանի գյուղերն ու քաղաքները տերրորի են յենթարկվում տաճկական չափուչների ու ավանայուրիստների — Աղբբեջանի այդ «աղատարարների» կողմից։ Զիվանշիրի գավառից «նորին գերազանցությանը» գրում են, թե տաճկական չափուչներ ի—բեյը և կ—բեյը հակալառավարական քաղաքականություն են տանում, կազմակերպում են վոճարագործ տարրերին, իրենց ուսին ազգաբնակության վրա հարկեր են դնում, տերրորի յենթարկում նրան և այլն։

Այդ ժամանակ ամբողջ Աղբբեջանում ժողովրդի այդպիսի «բարերարներ» և «փրկիչներ» չափազանց շատ կային։

Զինովեիկների յեվ իշխանության ծախվածությունը

Աղբբեջանը յուր կյանքում յերբեք չեր տեսել չի-նովիկների այդպիսի քմահաճուք, կաշառակերություն, չինովիկական թալան, ինչպես մուսավաթիստների անհիսունակ տիրապետության ժամանակ եր։ Յարական չինովիկների արարքները նրանց առաջ նսեմանում են։ Սշակերտները իրենց ուսուցիչներից ավելի «ընդունակ» դուրս յեկան։ Ներանց վոճարագործություններն ու գործունեյությունը հիշեցնում են միայն ցարական սատրապների ժամանակները, վորոնց անսահման հիմարությունները, քմահն ձույքը և ծախվածությունը չափազանց հաջող կերպով նկարագրել և անցյալ դարու մեծ դրամատուրգ Մ. Ֆ. Ախունդովը։

Քերենք մի քանի փաստեր։ Զիվանշիրից գրում են, թե հաշտարար միջնորդներն ու ուսուցիչները ուս-ձիկ են ստանում և իրենց համար ման են գալիս, դրա

համար ել բոլոր հիմնարկություններն ու դպրոցները փակ են:

Մինհստրը գանգատվում է նահանգապետին, թե պրիստավները վոչ մի գործ չեն կատարում, թե նրանք նույնիսկ առանց թուղթը կարդալու իրանց ստորագրությունն են դնում:

Նահանգապետը ուղղակի չի իմանում թե ինչ անի. ահա թե ինչ ե ասում նա. «Յես չեմ հերքում այն փաստը, վոր զեղծումներ գոյություն ունեն. դրա պատճառն այն ե, վոր քիչ թվով ծառայողների մեծ մասը գաղափարից հեռու մարդիկ են, վորոնցից չի կարելի պահանջել միջին վրակի շինողնիկի հատկություններ»... Պատասխանատու պաշտոններ գրավելու արժանի մարդիկ շատ քիչ կան և Բայց գլխավորն այն ե, վոր հենց կառավարության վլուխ կանգնած արժանի մարդիկ ել չկան: Պառամենտի անդամները, մինհստրները, նահանգապետները հենց իրանք են կաշառք վերցնում և ուրիշներին ել իրավունք են տալիս վերցնելու: Զիաթիխանովի նման գողին, ավազակին, վոր թալանել ե ամբողջ Շամախի քաղաքը, գեսպան են նշանակում Պարսկաստանում: Ղուբայի պետ գող, ավազակ Խան-Խոյսկին հենց իրա՝ մինհստր-նախագահի աղդականն ե:

Բագլի նահանգապետն ինքը պառամենտի արժանավոր անդամ լինելով, պառամենտի աչքի առաջ հարստանում ե: Բոլոր գավառապետները, նահանգապետները կաշառակերներ են, վորոնք զանազան ընտանեկան կամ ազգակցական կապերով կապված են մինհստրների և «Մուսավաթ» կուսակցությանն պատասխանատու անդամների հետ:

Տեղական գետօկրատական ու լիբերալ թերթերի ձնշման տակ վերջապես հեռացնում են ներքին գործերի մինհստրին, փոխարինելով նրան նորով և ավելի ազնիվով: Բայց հենց վոր նոր մինհստրը փորձում ե հեռացնելու ամենախոշոր ու չարամիտ կաշառակերներին, «Մուսավաթ» կուսակցությունը հենց իրեն՝ մի-

նիստրին ե հեռացնում և պառզամենտում մեծ սկանդալ ստեղծում: Բանից դուրս ե կալիս, վոր խոշոր կաշառակերներին մերկացնել՝ նշանակում ե ամբողջ «Մուսավաթ» կուսակցությունը մերկացնել, վորովհետև այդ «գեմոկրատական» կուսակցության բոլոր անդամները ըստ յերեսույթին նույն գործով եին զբաղվում:

Ապա լսենք, թե ինչ ե գրում ռեակցիոն «Իտտիհադ» թերթը այս բոլոր կարգերի մասին: —«Մինհստրները կարծում են, թե յերկիրը կառավարելու իմաստությունն ու ընդունակությունը կայանում ե նրանում, վոր ժանդարմական բռունցքը իրենց ձեռքը գրցեն, վոստիկանական ինտրիգներ սարքեն և կաշվե պորտֆելներ ձեռք բերեն: Նրանց կարծիքով բավական ե պորտֆելը թևի տակ գնել, վոր կարելի լինի մինհստրը կամ քաղաքական գործիչ դառնալ»: («Իտտիհադ» № 9, 1919 թ.): Ապա նույն թերթի առաջնորդողում կարդում ենք. «Այնպիսի պայմաններում, յերբ պաշտօնների ու ծառայության վրա նայում են, վորպես անձնական հարստացման միջոցի վրա, այդպիսի պայմաններում մինչև անգամ պարագուիսների ոգավաճությունները, յեթե այդպիսիք լինում են, դարձյալ անոգուտ են անցնում ե ժողովրդի շահերի գեմ են գնում: Խսկ այդ բոլորին ել պիտի ավելացնել, վոր մեզ մոտ վորոշակի քաղաքականություն չկա»:

«Իտտիհադ» ռեակցիոն թերթը միայն մոռացել ե, վոր խան—բեկական իշխանությունն այդ քաղաքականությունը վարել չեր կարող, վոր այդ իշխանության հիմքը դրված ե կաշառքի, ստի, անձնական շահերի, թալանի, բռնության վրա: Նա մոռանում ե, վոր այդ ամբողջ ձննողիկական սիստեմը կարող ե փոխել միայն պետական մի ուրիշ սիստեմ, այն ե՝ իսկական ժողովրդական, բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունը:

## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐ դեպի ազգային փոքրավաս- նությունները

Խան—բեկական կարգերը պահանջում ին ար-  
համարական և դաժան վերաբերմունք դեպի ազգային  
փոքրամասնությունները։ Նիկոլայի հնագանդ ստրուկ-  
ները ազատվերով և տեր ու տիրական դառնալով, ազ-  
գային փոքրամասնությունների նկատմամբ նույն ըս-  
տրակական պրոմներն եին գործադրում։

« . . . Շամախու գավառի մալականները չափա-  
ղանց հանդուգն և անհանգիստ վարք ունեն թե տեղա-  
կան թուրք ազգաբնակության վերաբերմամբ և թե  
գավառի ադմինիստրացիայի նկատմամբ»—գրում ե  
գավառապետը։

Ահա թե ինչ վոճ ու լեզու են բանեցնում նախ-  
կին ստրուկները, վոր պատահմամբ տերեր եին դարձել։

Գերմանացի—կոլոնիստները պառամենտին գրում  
են. «Տեղական իշխանությունների անգործունելության  
շնորհիվ կոլոնիստների անձնական—ունեցվածքային  
ապահովությունը այնչափ վտանգված ե, վոր իրենք  
կոլոնիստները ներկայումս բառիս բուն նշանակու-  
թյամբ հնարավորություն չունեն խաղաղ աշխատան-  
քով զբաղվելու։ Ամեն որ նրանք գտնվում են իրենց  
հողերի վրա վոճագործ տարրերի կողմից հարձակի-  
լու վտանգի առաջ։ Զնայած բազմաթիվ զանգատնե-  
րին ու խնդիրներին, այդ վոճագործ տարրերի գեմ  
տեղական իշխանությունները վոչ մի եյական միջոց  
չեն ձեռք առնում։ (կոլոնիստների ներկայացուցիչ  
կունի գեկուցումը)։

Հայերի մասին արդեն ավելորդ ե խոսել. նրանց  
նկատմամբ «եյական միջոցներ» եին ձեռք առնվում...

## ԶԱՐԴԱՐԱՐԱՆԵՐ

Ազգամիջյան կոտորածն ու գրգռումները այն մի-  
ջոցներն եին, վորոնց ոգնությամբ խաները, բեկերն

ու կապիտալիստները հեղափոխական մթնոլորտը ցը-  
րում եին. Թուրք և հայ բանվորների մեջ խոռովու-  
թյուններ գցել, հայ ու թուրք գյուղացիներին իրար  
դեմ գրգռել, գյուղերն ու քաղաքները հրի ու թալանի  
մատնել, տերրորի. և ավերածությունների միջոցով հա-  
զարավոր բանվորներ ու գյուղացիներ կոտորել, —ահա  
այն հիմնական միջոցները, առանց վորի խան-բեկա-  
կան ու բուրժուական պետական սիստեմը յուա տանել  
շի կարող։

Նուխու, Արեջի գավառներում հայերին հարյուր-  
ներով կոտորում են, հրի մատնելով հայկական գյու-  
ղերը. Ղարաբաղում դահիճ Սուլթանովը նրանց հա-  
զարներով ե վորոնչացնում։ Խոկ դրան վորպես պատաս-  
խան՝ հայ-դահիճ դաշնակները նույն միջոցներն են  
գործադրում թուրքական գյուղերի նկատմամբ, թող-  
նելով հարյուրավոր և հազարավոր անտուն անտեր վոր-  
քեր ու այրիներ, մուրացիկներ ու հաշմանդամներ։ Թե  
վորտեղ են առաջ կոտորած սկսել, վորտեղ ինչքան են  
սպանել, ինչպես են սպանել,—առա թե ինչով եին ըզ-  
բազում դաշնակները, մուսավաթիստները, իտոիհա-  
դիստները, աշխատելով իսկությամբ իրար հետեւել,  
կոտորելու գործում մեկը մյուսից առաջ անցնել, կո-  
տորել ու թալանել։ Դա մի ինչ վոր դժոնային խաղ եր,  
վոր վորոնչացնում եր ազգաբնակության աշխատավոր  
մասսաներին՝ մարզկության թշնամիներին՝ բուրժուա-  
զիային ու կալվածատերերին ուրախություն պատճա-  
ռելու համար։ Պագրումային գրականություն եր հրա-  
տարակվում, թերթերի եղերում գահիճները բացարձակ  
կերպով սպանությունների, կոտորածների ու ջարդերի  
կոչ եին անում։

Ահա թե ինչ են գրում ավանտյուրիստ-ջարդա-  
րաբները իրենց թերթերում. «45 հազար թուրք գաղ-  
թականներ Զանգեղուրում հայերի կողմից ավերված  
գյուղերից լցնում են Ղարաբաղի ուրիշ գավառները.  
նրանք իրենց մերկ մարմիններով ամենածանր տպա-

վորությունն են թողնում. և այդ մասին վոչ վոք չի խոսում և չի զայրանում (և վոչ վոք իբր թե հայերին չի կոտորում, նրանց գյուղերը չի այրում, — այնպես չե՛ էահիճ. Մ. Կ.), իսկ յերբ Շուշու շրջակայքի թուրք ազգաբնակությունը քաղաքում ծագած անկարգությունների ժամանակ, վոր իրենք հայերն եին սարքել յուրայիններին ոգնության գնալիս ճանապարհին Ղայրալիշն գյուղում դիմադրության են հանդիպում և ավերում այդ գյուղը, առանց Աղրբեջանի իշխանությունների գիտության (Ալինի թե այդ մասին չի իմացել ջարդարար Սուլթանովը—Ղալաբաղի գններալ-ճանգապետը. — Մ. Կ.), ապա այդ մասին ամբողջ աշխարհն ի վեր գոռում են»:

Ահա թե ինչպիսի ջարդերի են կոչ արել այդ սըմբիկաները, ինազարով հասարակության տականքների մութ բնազդների վրա Ահա թե ինչպես են վառել վրեժի զգացմունքը, շովինիստական տրամադրությունները, պագրումային բնազդները այդ «բարերարները», «ժողովրդական հերոսները»։ Ահա թե ինչպես են հանցավոր գուրս բերել հայ ազգաբնակությանը, իրենց և դաշնակների մեղքը ցցելով հայ չքավոր գյուղացիության վրա։ Իսկ այդ բոլորի հետևանքով յեղբայրը սպանել ե յեղբորը։

Բագվում, Ալյաթում և ուրիշ տեղերում հայկական ջարդեր են տեղի ունենում, յեղբայրական արյունը գետի նման հոսում ե, իսկ «կուլտուրական» յելուպացիները—անգլիացիները, վոր իրենց գաղությունում սովոր են ջարդերի, բավկանությամբ են շփում իրենց ձեռքերը, յերբ տեսնում են մարդկային հոսող արյունը։

«Ամեն որ Շուշի են գնում անգլիական ավտոմոբիլները՝ կասկածելի բեռներով»—տեղական իշխանությունները հաղորդում են կառավարությանը, հայտնելով դաշնակների նախապատրաստական աշխատանքի և այդ ստոր աշխատանքին անգլիացիների ցույց տված

ոգնության մասին։ Անգլիացիները ոգնում են թե մեկին և թե մյուսին, որն ելով այդ ջարդերը և ցինիկարար խրախուսելով սպանությունները։ Այդ յեղբայրասպան յերկառակություններին և ջարդերին վերջ չեր լինի, յեթե իրենք մասսաները չվճռեյին այդ հարցերը, չկառուցեին իրենց կյանքը, չկազմակերպեին բանգորակություն։

Մուսավաթիսիները, մենևեվիկները յեվ դաւակները իրար կոկորդ են կուծում

Այս ավանտյուրիստներն ու մարդասպանները չբավականալով ներքին ջարդերով և սպանություններով, այժմ ել կորիվսեր են սկսում Անգրկովկասի ժողովրդների մեջ։ Վրաստանը կովում և Հայաստանի վեմ, Հայաստանը կովում և Աղրբեջանի դեմ, իսկ Աղրբեջանի և Վրաստանի մեջ հարաբերությունները քանի վնում, ավելի ու ավելի են լարվում։

Մի որինակ բերենք, վորը լավ ցույց կտա, թե ինչպիսի «բարեկամական» հարաբերություններ են յեղել Աղրբեջանի և Վրաստանի մեջ։

Նոյ Ժորդանիան հայտնում և Աղրբեջանի կառավարությանը վրացիների և աղրբեջանցիների մեջ սահմանի վրա տեղի ունեցած ընդհարումների մասին և առաջարկում ե «պիկի» դիվելիքան Կարայազից հեռացնել։ Դրա հետ մերժամանուկ նա սպառնում ե բռնի ուժով նրան զինաթափ անել։

Ղազախի գավառապետն ել Բագու և հայտնում հետեւյալը.՝ «500 հոգուց բաղկացած վրացական մի զորամաս, վոր գտնվում ե Մուսավարի գյուղի մոտ, վորձել ե գրավել Խրամ գետի վրայի Կարմիր կամուրջը, վոր Աղրբեջանի և Վրաստանի մեջ սահման ե, բայց մեր պահակը թույլ չի տվել։ Վրացական մի սպա զընում ե Թիֆլիս, այդ մասին հայտնելու իր կառավա-

բությանը: Հնարավոր ե, վոր Վրաստանի զորամասն այդտեղ ուժեղացնվի և այլն:

Զաքաթալայի նահանգապետը յուր տեղեկագրի մեջ գրում ե, թե ինքը զրացական գյուղերն Աւրբե ջանին միացնելու նպատակով ակտիվ գաղտնի աշխատանք և տանում Վրաստանի թուրքերի մեջ, իսկ կառավարական «Ազերբայջան» թիրթը զանդաւովելով վըրացիների վրա, գրում ե. — «Հազիվ դադարել են պատերազմական դործողությունները հայերի ու վրացիների մեջ բորչալուի շրջանի համար, և Վրաստանի կառավարությունն արդեն վորոշ իրավունքներ և ներկայացնում Զաքաթալայի շրջանի վերաբերմամբ: Այդ շրջանին վերաբերող գործերն ու դոկումենտները, վոր մի ժամանակ գտնվել են Թիֆլիսում, Ազրբեջանի կառավարությանը չեն հանձնվում» («Ազերբայջան», 1919 թ. № 8):

Իրա հետ միաժամանակ «Ազերբայջան» թիրթը շատ լավ բնութագրում ե. Անդրկովկասում ստեղծված դրությունը. — «Ազրբեջանի և Հայաստանի ժողովուրդների մեջ գոյություն ունեցած դարավոր բարեկամությունը քանից վտանգի առաջ ե յեղել կանգնած միայն սահմանագծային հարցերի շուրջը ծագած թյուրիմացությունների պատճառով:

Յեկ իսկապես. այդ հարցը շատ լուրջ կողմեր ունի: Այդ յերկու կառավարությունների ձգումները խիստ տարբերում են այդ պետությունների ձգումներից: Նյու կառավարությունների նպատակները չափազանց ակներեւ են. Նրանցից ամեն մեկը աշխատում ե գրավել մյուսի հողը, պատճառաբանելով զանազան տնտեսական ու ռազմագիտական նկատառումներով և ամենեին հաշվի չնստելով ընդհանուր դեմոկրատական և բարոյական սկզբունքների հետ» (միայն պարոնայք մուսավաթիւններ, գուք իզուր եք ձեզ այդ «պատվագոր» դաշնակ. մենքնիկական ընտանիքից հանում. պատմությունը ձեզ ընդմիշտ իրար հետ կապել ե. — Մ. Կ. ,

(«Ազերբայջան» թիրթի 1919 թ. հունվար ամսի № 6 ի առաջնորդող), Լավ եք խոսում, պարոնայք, բայց մենք մի քիչ կավելացնենք դրան:

Ամենից շատ վախենալով պրոլետարական հեղափոխությունից և նրա վճռական արշավանքից, գուք ամեն կերպ աշխատել եք մասսաների ուշադրությունը հատ գարձնել հեղափոխական շարժման հարցերից, իրենց դասակարգային շահերից և սահմանագծային վեճեր ու ընդհարումներ սարքելով, գուք արհեստական կերպով շովինիզմ ու աղքամիջյան կոտորածներ եք ստեղծել:

Մուսավաթիստները, մինչեւկաներն ու դաշնակները. այդ գայլերը դառնան մորթում, վոչ միայն ավերել են Անդրկովկասի գյուղացիության տնտեսությունը, այլև միշտ պատրաստ են յեղել կատաղի կերպով իրար կոկորդ կոծելու:

Այդ մասսատուների ջանքերով Անդրկովկասը վեր և ածվել միշտ գործող հրաբուխի, վորը պատրաստ ե յեղել ամեն մի բոպեյում մարդկային արյունով վողողելու մեր դաշտերը, քաղաքներն ու գյուղերը:

Միջազգային բարակականություններ յեվ մուսավաթական Ադրբեջանի «ինքնուրույնություններ»

Ազրբեջանի անուժ, վողորմելի, վախկոտ մինիստրները ծունկ են չքում տաճկական փաշաների, անգլիական ֆելդֆերելների և դենիկինյան դերժիմորդների առաջ. քննում են դրանց բոլորի առաջ և իրանց «մինիստրական» ամբողջ ժամանակը անցկացնում ոտարյերկրյաներկայացուցիչների ընդունարաններում: Տաճկական գեներալները լցնելով ամբողջ Ազրբեջանը ավանտուրիստներով, չափուներով, դատարկապորտներով, տականքներով, համարում են այդ յերկիրն իրենց իսկական կարլածքը, կարգադրություններ են անում Ազրբեջանի բանվորների և դյուղացիների ու

նեցվածքի, տնտեսության և յերկաթուղագծերի վրա: Մինհաստիները բողոքում են Ադրբեջանի «հերոս-փրկիչների» առաջ. «Մուսավաթը» հետևյալն երում ուսմանյան մինհաստրությանը. «Միջազգային իրավունքների տեսակետից անհանդուրժելի և բացառապես Ադրբեջանին պատկանող յերկաթուղագծերը զիջել ուստարձերկյա կառավարության»: Իսկից դուրս ե գալիս, վոր ոսմանյան գեներալները Ադրբեջանը համարելով իրենց մի նահանգը, նրա յերկաթուղագծերը հանձնել են գերմանացիներին: Առաջեւ ինչպես են վարվել ու կարգադրություններ արել Ադրբեջանում նրա «փրկիչներն» ու «հերոսները»:

Իսկ անգիտական միլորդները ծաղրում են մինհաստրական այդ ոսկերեսային խումբը, հրճվելով նրանց վողորմելիությունով, ապուշությունով, անկարողությամբ և կլոունությամբ:

Նրանք մերթ Ադրբեջանին նվիրում են ինքնուրույնություն, իրենց մահմեդականության «բարերարներ» ու «պաշտպաններ» հայտարարելով, մերթ Ադրբեջանը հանձնում են Դենիկինին, մերթ բաժանում են նրա շրջանները Հայաստանի և ուրիշների մեջ: Իսկ «մուսավաթիստները» մերթ ծիծառում են, մերթ «հրճվում», մերթ լալիս և զվարճություն պատճառում իրենց մեծ տերերին: Առաջ մի որինակ նրանց արցունքներից ու բողոքներից:

«Ադրբեջանի մայրաքաղաքում նրա կառավարության և զանակից հրամանատարության աչքի առաջ այնպիսի փաստեր են կատարվում, վորոնք հաղիվ թույլատրելի լինեն մի ուրիշ ինքնուրույն պետության մեջ»:

Ինքնակոչ կամավորական բանակի հատուկ լիզար-ները, վոր բացարձակ մոնարխիստական նպատակներունեն և ձգում են Անբաժան Ռուսաստանի նախկին սահմանները վերականգնելու, բացարձակ կերպով Բագրում զորամասեր են կազմում, մեծ ոռնիկներ տալով

կամավորներ են ընդունում և կազմակերպում են ամբողջ զինվորական վարչություններ, վորոնք ինչ վոր գրուպպաների վելիկողերժամկետ շահերին են ծառայում: Մեր կարծիքով դաշնակից հրամանատարությունը, վոր Ադրբեջանի կառավարությանը լիակատար աջակցություն և խոստացել, ոյս աննորմալ յերեսութիւն վրա պետք ե ուշադրություն դարձնի»: («Ազերբայջան» 1919 թ. № 14):

Վորքան վողորմելի եք դուք, պարոնայք մինհաստրներ. և մինչև այժմ ել վոճագործ ու լակեյություն անող ամուսավաթիստները իրենց կապիտալներն ու կորցրած իրավունքները հետ ստանալու համար ելի դիմում են պարոնայք միլորդների բարեհաճ ուշադրությանը: Արտասահմանում հրատարակվող իրենց թերթերում գովելով Ազրբեջանի հարստությունները—նավթը, բամբակը և այլն, և առատածենությամբ ժողովդի այդ հարստությունների առկտուր հայտարարելով, նրանք մտածում են Ազրբեջանը դարձնել արևմտյան յերկրագիտական արդյունաբերությունից կախված մի յերկիր և վերականգնել այն ժամանակները, յերբ հենց իրենց խոսքերով Ներ փողոցներում այնպիսի փաստեր են կատարվում, վոր հազիվ թե թույլատրելի լինեն ինքնուրույն Ազրբեջանում»:

«Մուսավաթիստների» քաղաքականությունը նրանց տիրապետության այդ անփառունակ շրջանում ճիշտ բնութագրել են իտտիհապիստները: Անա թե ինչ ե գըրել նրանց թերթը. «Մուսավաթիստների տակտիկան և համակրությունները փոփոխվում են կախարդական գավաղանի մի շարժումով, մերթ նրանք դառնում են ֆեդերալիստներ՝ միացյալ Ռուսաստանի սահմաններում, մերթ ինքնուրույն անդիմական են դառնում, մերթ տեսնում են տաճիկների մասին են ջերմ խոսքեր առւմ, միայն, իհարկե, այն դեպքում, յերբ զգում են, վոր տաճիկները տվյալ մոմենտում ավելի մեծ ուժեր ունեն: Աչքերին թող փշելու համար, նրանք միշտ ա-

սում են, իբր թե դժգո՞ն են իրենց տերերից, բայց հենց վոր այդ տերերը ինչ վոր շտապ բան են պահանջում, ապա մի քիչ առուտուր անելով, միշտ կատարում են նրանց հրամանները»: Իտափինագիտական թերթը մատնանշել ե «մուսավ սթիւտների» դավաճանական տակտիկան տաճիկների նկատմամբ՝ նրանց լիակատար ջախջախման դժվարին մոմենտներին («Իտափիադ» թերթի Հ 24): Խոկ հարգելի պրոֆեսոր Ալիքելի Հուսեյին Զագեն Բազվում կայացած թուրքաբանական համագումարում յեղած ժամանակ մեզ հետ ունիցած անձնական զրուցում խորին համոզմունքով պատմում եր «մուսավաթական Ադրբեջանի» անդիմասներ ներկայացուցության դործունեցության ու վոճագործությունների մասին, ավանոյուրիստ Վ. ի գլխավորությամբ:

Սովորելով իրենց տեր յեկրտապահն իմակերիալիստներից ստի, ստորության ու կեղծավորության բոլոր ձևերը, նրանք խորհուրդ են տալիս Ստամբուլի իրենց ներկայացուցչին «միշտ և բոլորի հարցերին անփորոշ պատասխաններ տալ»:

Տվել են, արդյոք, նրանք անորոշ թե միանգամայն վորոշ պատասխաններ, միևնույն ե. նրանք յեղել են և այժմ ել մնում են վորպես յեկրտական կլոուններ, վորոնք չնշին գնով գիշատիչ իմակերիալիստների ձեռքում ծաղրածուների և դավաճանների գեր են կատարում:

Այդ սակերները դեռ շարունակում են Ադրբեջան համարել իրենց ժառանգական կալվածքը և իրենց ունեցվածքները, ամարանցները, տներն ու իրավունքները հետ ստանալու համար Ադրբեջանի ժողովրդի հոգին ու հարստությունները առաջարկում են Յեկրտապահի առևտուրական գրասենյակներին: Սխալվում եք, պարոնայք: Բանվորները և զյուղացիները ձեզ դուրս են վանդել մեր յերկրից: Ձեր առաջ դռները ընդմիշտ փակ են, Զեզ մնում ե միայն վողորմություններ հա-

վագել Ստամբուլի, Լոնդոնի և Փարիզի գրասենյակներում, յերազել յերբեմնի «մինիստրական փառքի» մասին, ապաստան գտնել ոտարյերկոյա պաշտպանների բարեկործական տներում և լակեյական աշխատանքներից ստացած համեստ վճարներով մեկ-մեկ քեֆեր անել շանտաններում:

### Քամելյոնություն անող «Մուսավաթը»

